ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 800-Ա

ԱՐՄԵՆ ՄԱՅԻՍԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 10,11,22 կետերի պահանջներով, հիմք ընդունելով Արմեն Հայրապետյանի 2026 թվականի օգոստոսի 14ի դիմումը, « ԳԵՈԳԼՈԲԱԼ » ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագիծը, հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման 2026MW3RBT ծածկագիրը և հաշվի առնելով, որ համայնք Ակունք գյուղ Ակունք, 23-րդ փողոց, թիվ 23 հողամաս հասցեում ինքնակամ կառուցված 195.56քմ արտաքին չափերով շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոների էական խախտումների և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք որոշում եմ.

1. Արմեն Մայիսի Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 195.56քմ արտաքին չափերով շենք-շինությունները ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված՝ 145.6քմ բնակելի տան օրինականացման համար համայնքային բյուջե կատարել վճարում՝ մեկ մետր քառակուսու համար 1673 ՀՀ դրամ:
3. Ինքնակամ կառուցված՝ 26.26քմ ամառային խոհանոցի, 6.0քմ զուգարանի և 17.7քմ պարսպի օրինականացման համար համայնքային բյուջե կատարել վճարում՝ մեկ մետր քառակուսու համար 1003.8 ՀՀ դրամ:
4. Պարտավորեցնել նրան ինքնակամ կառուցված՝ 145.6քմ բնակելի տան, 26.26քմ ամառային խոհանոցի, 6.0քմ զուգարանի և 17.7քմ պարսպի օրինականացման համար Ակունք համայնքի բյուջե / 900105203211 հաշվեհամար/ կատարել վճարում՝ 293 739 / երկու հարյուր ինսուներեք հազար յոթ հարյուր երեսունինը / ՀՀ դրամ:
5. Սահմանել,որ որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրավան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2026թ. օգոստոսի 17
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 801-Ա

ՀՀ ԱԲՈՎՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՋԱՌԻ ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1986-1991ԹԹ. ԹԻՎ 4 ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐՔԻ 319 ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « ՀՀ տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 59-րդ հոդվածի 5.1 կետով՝ որոշում եմ.

1. ՀՀ Աբովյանի շրջանի Զառի գյուղխորհրդի գործադիր կոմիտեի 1986-1991թթ. թիվ 4 տնտեսությունների գրքից 319 անձնական հաշվում Գեորգ Էդուարդի Սաֆարյան / անուն, հայրանուն, ազգանուն / փոխարեն սխալմամբ գրառվել է Գրիգոր Էդվարդի Սաֆարյան / անուն, հայրանուն, ազգանուն /, հիմք ընդունել Գեորգ Էդուարդի Սաֆարյան / անուն, հայրանուն, ազգանուն /:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

2026 թ. Օգոստոս 18
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
18 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 802-Ա

ԱԴԵԼԱԻԴԱ ԵՓՐԵՄՅԱՆԻՆ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՄԱՍԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 163-րդ հոդվածների, հիմք ընդունելով Ադելաիդա Եփրեմյանի դիմումը՝որոշում եմ.

1.Տրամադրել Ակունքի համայնքապետարանի համայնքային ենթակայության կազմակերպությունների գործունեության համակարգող Ադելաիդա Եփրեմյանին 2025 թվականի ամենամյա չօգտագործված արձակուրդից 5 աշխատանքային օր՝ սույն թվականի օգոստոսի 24-ից մինչև օգոստոսի 28-ը ներառյալ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ

2026 թ. օգոստոսի 18
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 803-Ա

ՀԱՅԿ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայկ Մարկոսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Տրամադրել համայնքապետարանի աշխատակից Հայկ Մարկոսյանին 2026 թվականի ամենամյա արձակուրդը՝ 20 աշխատանքային օր՝ սույն թվականի օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

20<u>26</u> թ. <u>օգոստոսի 18</u>
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 804-Ա

ՄԱՄԲՐԵ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻՆՉԵՎ 20% ԵՎ 20%-ԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2,3 կետերի պահանջները, Մամբրե Գառնիկի Անուշավանի դիմումը և հաշվի առնելով, որ նրա ընտանիքին հատկացված հողամասից ավել օգտագործվող հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջության.որոշում եմ.

1. Մամբրե Գառնիկի Ավետիսյանին և Անուշավան Գառնիկի Ավետիսյանին հատկացված՝ / հիմք ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր / 2.398հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերից մինչև 20% ավել օգտագործվող 0.18671հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը:
2. Պարտավորեցնել Մամբրե Գառնիկի Ավետիսյանին և Անուշավան Գառնիկի Ավետիսյանին 20%-ից ավել օգտագործվող 0.54638հա հողամասի համար Ակունք համայնքի բյուջե կատարել վճարում / 900105203179 հաշվեհամար / ավել օգտագործվող հողամասի կադաստրային արժեքի 30%-ի չափով՝ 61 058 / վաթսունմեկ հազար հիսունութ / ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

20 26 թ. օգոստոս 19
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
19 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 805-Ա

ՄԱՄԲՐԵ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԳԱՌՆԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻՆՉԵՎ 20% ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի պահանջները, Մամբրե Գառնիկի Անուշավանի դիմումը և հաշվի առնելով, որ նրա ընտանիքին հատկացված հողամասից ավել օգտագործվող հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջության՝ որոշում եմ.

1. Մամբրե Գառնիկի Ավետիսյանին և Անուշավան Գառնիկի Ավետիսյանին հատկացված՝ / հիմք ժառանգության իրավունքի վկայագիր / 2.398հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերից մինչև 20% ավել օգտագործվող 0.26089հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ

2026թ. օգոստոսի 19
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 806-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հողային օրենսգրքի 2-րդ, 9-րդ և 35-րդ հոդվածների պահանջները,Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի 17 սեպտեմբերի N 1066-Ն որոշման կարգի 7-րդ կետը, հաշվի առնելով կատարված մելորատիվ աշխատանքները և Արթուր Միշայի Մկրտչյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Արթուր Միշայի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-049-0230-0059-ից կադաստրային ծածկագրով, 0.2873հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական 4-րդ կարգի ջրովի վարելահողի:
2. Վերը նշված հողատեսքի փոփոխությունը սահմանված կարգով ներառել ընթացիկ տարվա համար կազմվող հողային հաշվեկշռում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2026 թ. օգոստոս 21
գ. Ակունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՕԳՈՍՏՈՍԻ 2026թվականի N 807-Ա

ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՄԱՐՈԶ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածի, անհետաձգելի աշխատանքների կատարման անհրաժեշտությունից ելնելով՝ որոշում եմ.

1. Ակունք համայնքի ղեկավարի օգնական Մարոզ Սարիբեկյանին ամենամյա արձակուրդից հետ կանչել սույն թվականի օգոստոսի 24-ից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

2026թ. օգոստոսի 21
գ. Ակունք